

ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱԾՎԵՏՎՎՈՒԹՅՈՒՆ

ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2010 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏ

2011

## ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից 2010 թվականին կատարված աշխատանքների մասին

2010 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրականացվող ֆինանսատեսական քաղաքականությունը հիմնականում ուղղված էր մակրոտեսական կայունության ապահովմանը, տեսական աճի բարձր տեմպերի պահպանմանը՝ զուգահեռաբար իրականացնելով զարգացմանն ուղղված արդեն իսկ մեկնարկած բարեփոխումները և առաջնահերթ միջոցառումները:

2010 թվականի համախառն ներքին արդյունքը կազմել է 118.2 մլրդ դրամ՝ ապահովելով իրական աճի տեմպ 5.5 տոկոսի չափով: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2010 թվականի արդյունքներով կազմել է 823.2 հազ. դրամ՝ 2009 թվականի 723.7 հազ. դրամի դիմաց:

Ցուցանիշը	2005	2006	2007	2008	2009	2010
Անվանական ՀՆԱ (մլն դրամ)	51379	61886	70791	87148	102339	118187
ՀՆԱ-ի իրական աճ (%)	14.1	10.1	8.8	14.3	13.1	5.5
ՀՆԱ 1 շնչի հաշվով (հազ. դրամ)	373.1	449.4	510.0	623.1	723.7	823.2

Հաշվետու տարվա պետական բյուջեի եկամուտների ծրագրված ցուցանիշները ամբողջությամբ ապահովել են՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 12.0 տոկոսով, և կազմել են 23,807.5 մլն դրամ, ինչը հնարավորություն է ստեղծել ժամանակին և ամբողջությամբ կատարել 2010 թվականի պետական բյուջեով ստանձնված ծախսային և առաջին հերթին՝ սոցիալական պարտավորությունները: Հաշվետու տարում հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 15,486.3 մլն դրամ՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը 13.2 տոկոսով: 2010 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 62,182.4 մլն դրամ, կամ 2009 թվականի նկատմամբ 12.9 տոկոսով ավելի:

2010 թվականի ընթացքում ԼՂՀ ֆինանսների նախարարության գործունեությունը ուղղված էր ԼՂՀ օրենքներով, կառավարության որոշումներով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ վերապահված գործառույթների ու լիազորությունների իրականացմանը, ինչպես նաև ԼՂՀ կառավարության գործունեության և այլ աշխատանքային ծրագրերի կատարումն ապահովող միջոցառումների իրագործմանը: Նշված ուղղություններով կատարված աշխատանքները հիմնականում բնութագրվում են հետևյալ կերպ:

#### Բյուջետային քաղաքականության ոլորտում.

Հաշվետու ժամանակաշրջանում բյուջետային քաղաքականությունը նպատակառության է եղել բնակչության սոցիալական հարցերի լուծմանը, կենսամակարդակի բարձրացմանը,

պետական միջոցների նպատակային ծրագրավորման գործընթացների իրականացմանը:

«ԼՂՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի և «ԼՂՀ 2010 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ԼՂՀ կառավարության որոշման դրույթների համաձայն՝ աշխատանքներ են կատարվել պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների, բյուջետային հիմնարկությունների և կազմակերպությունների կողմից ներկայացված պահպանման ծախսերի նախահաշիվների, հաստիքացուցակների, տարիքիկացիաների, ինչպես նաև առանձին ծառայություններից օգտվելու համար կնքված պայմանագրերի ստուգման ուղղությամբ:

Ընդունվել, ստուգվել և ընդհանրացվել են համայնքների ավագանիների կողմից հաստատված 2010 թվականի համայնքային բյուջեները՝ ըստ եռամսյակային համամասնությունների:

Ուսումնասիրվել, ստուգվել և համաձայնություն է տրվել պետական պատվերի և վճարովի ծառայությունների գծով կիրառվող նորմատիվների և միջինացված գների վերաբերյալ:

2009 թվականին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված մեկ տարի ընդհատումից հետո հանրապետությունում պետական բյուջեի ձևավորման գործընթացը կրկին իրականացվել է միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիման վրա:

Առաջին անգամ միասնական կարգով կազմված և ԼՂՀ վարչապետի 2010 թվականի հունիսի 16-ի «ԼՂՀ 2011 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» թիվ 134-Ն որոշմամբ հաստատված ժամանակացույցի համաձայն կազմակերպվել են ԼՂՀ 2011-2013 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ԼՂՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման և կազմնան աշխատանքները։ Մշակվել են ԼՂՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացվող 2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ԼՂՀ 2011 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման մեթոդական ցուցումները։

Վերոնշյալ որոշման պահանջների համաձայն կազմվել են նաև 2011 թվականի համայնքների բյուջեների նախագծերի մշակման և ԼՂՀ պետական բյուջեից հատկացումներ ստանալու նպատակով բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման և ներկայացման պարտադիր բնույթի մեթոդական ցուցումները և խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցները, բնապահպանական և բնօգտագործման վճարների, պետական տուրքերի և այլ եկամուտների գծով ԼՂՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրման ենթակա բյուջետային մուտքերի գումարների կանխատեսումների կազմման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումները։

Ուսումնասիրվել և ընդհանրացվել են.

ա/ պետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացված 2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և 2011 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը,

թ/ շրջանների տարածքում տեղաբաշխված համայնքներից, Ստեփանակերտի քաղաքապետարանից ստացված ԼՂՀ պետական բյուջեից դուտացիա ստանալու 2011 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը,

գ/ ԼՂՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացված քնապահպանական և բնօգտագործման վճարների, պետական տուրքերի և այլ եկամուտների գծով ԼՂՀ 2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով և ԼՂՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրման ենթակա բյուջետային մուտքերի գումարների մասին տեղեկությունները:

Մշակվել է «ԼՂՀ 2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր», «ԼՂՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը և նախագծի բացատրագիրը ու ներկայացվել ԼՂՀ կառավարության քննարկմանը: Ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել ԼՂՀ Ազգային Ժողովի մշտական հանձնաժողովներում, պատգամավորական խմբակցություններում «ԼՂՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի նախագծի քննարկումներին:

«ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն մշակվել է ԼՂՀ 2011 թվականի պետական բյուջեի ծախսերի տարեկան հատկացումների կատարման եռամսյակային (աճողական) համամասնությունները (ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի ու դրանք իրականացնող մարմինների) հաստատող «ԼՂՀ 2011 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» որոշման նախագիծը:

Մշակվել է «ԼՂՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը, որը հիմնականուն պայմանավորված էր արտոնյալ խմբերի քաղաքացիներին տրվող ամենամյա դրամական օգնության չափերի և 2010 թվականի նոյեմբերի 1-ից կենաքոշակների բարձրացմանը և առաջնային ու ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք օբյեկտների կառուցման և վերանորոգման աշխատանքների իրականացման անհրաժեշտությամբ: Նշված օրենքով պետական բյուջեի ծախսերը ավելացել են 4,590.0 մլն դրամով և կազմել են 64,469.7 մլն դրամ:

«ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի ու «ԼՂՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պատրաստվել են ԼՂՀ 2010 թվականի պետական բյուջեում փոփոխություններ կատարելու մասին ԼՂՀ կառավարության թվով 14 որոշումների նախագծեր:

Հաշվետու տարվա ընթացքում կատարվել է ԼՂՀ 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված ԼՂՀ կառավարության պահուստային ֆոնդից և այլ կենտրոնացված ֆոնդերից ԼՂՀ կառավարության որոշումներով իրականացվող հատկացումների, օրենսդրությամբ սահմանված կարգով ԼՂՀ կառավարության որոշումներով բյուջետային միջոցների

Վերաբաշխումների հաշվառումը:

Մշակվել են պետական բյուջեի կազմման և կատարման հարցերին առնչվող ԼՂՀ օրենքների, ԼՂՀ Նախագահի հրամանագրի, ԼՂՀ կառավարության և վարչապետի որոշումների նախագծեր, ինչպես նաև նախարարություններից ու գերատեսչություններից ստացված համանման նախագծերի վերաբերյալ տրվել են համապատասխան առաջարկություններ:

50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող բաժնետիրական ընկերությունների տրամադրության տակ մնացած շահույթի բաշխման նպատակով ուսումնասիրվել են պետական լիազորված մարմիններից ստացված առաջարկությունները և տրվել են համապատասխան եզրակացություններ զուտ շահույթի օգտագործման ուղղությամբ: 2009 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքով ստացված զուտ շահույթի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի դիմաց վճարման ենթակա շահութաբաժինների չափերի վերաբերյալ պատրաստվել է ԼՂՀ կառավարության որոշման նախագիծ:

Մշակվել և ԼՂՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «50 տոկոսից ավելի պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների կողմից իրականացվող որոշ ծախսերի առավելագույն թույլատրելի սահմանաշափերը սահմանելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը, որը ԼՂՀ կառավարության կողմից ընդունվել է 2010 թվականի հունիսի 15-ին:

ԼՂՀ ֆինանսների նախարարության ամենօրյա ուշադրության և հսկողության կենտրոնում են գտնվել արտաբյուջետային մուտքերի համակարգման, հաշվառման և հրատապ ծրագրերի իրականացմանը նպատակառուղղված ֆինանսավորման գործընթացները:

Մարդասիրական օգնության արտաբյուջետային հաշվից կատարվող ֆինանսական հոսքերի մասին պատրաստվել են ամենամյա հաշվետվություններ:

### **Գանձապետական համակարգի ոլորտում**

2010 թվականին գանձապետական համակարգի ոլորտում ԼՂՀ ֆինանսների նախարարության աշխատանքները ուղղված են եղել ինչպես ԼՂՀ պետական բյուջեի համաշափ և սահուն կատարման ապահովմանը, այնպես էլ համակարգի զարգացման և կատարելագործման համար անհրաժեշտ գործառույթների իրականացմանը:

Ամբողջ ծավալով և առանց ուշացումների վճարվել են աշխատավարձի գծով նախատեսված միջոցները, կենսաթոշակները, նպաստները, ծննդիլության և բազմազավակության խթանման միջոցառումների և այլ սոցիալական ծրագրերի իրականացման ծախսերը:

Տարվա ընթացքում գանձապետական համակարգը սպասարկել է 441 իրավաբանական անձանց (47 պետական կառավարման մարմին, 228 տեղական ինքնակառավարման մարմին, 23 այլ բյուջետային հիմնարկ, 134 պետական ոչ առևտրային կազմակերպություն և 9 փակ բաժնետիրական ընկերություն) 5619 գանձապետական հաշիվներով, որից 1481՝ պետական

բյուջեի, 3990՝ համայնքային բյուջեների, 156՝ արտաքյուջետային գործառնությունների իրականացման համար:

Հաշվետու ժամանակահատվածում նախարարության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

➤ ընդունվել են ԼՂՀ նախարարությունների, գերատեսչությունների, բյուջետային հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվող բյուջետային ծախսերի ֆինանսավորման հայտերը, ստուգվել և ճշտության դեպքում իրականացվել է ֆինանսավորումը.

➤ պետական բյուջեի ծախսերի դրամարկղային կատարումն իրականացնելու նպատակով ապահովվել է առկա դրամարկղային միջոցների բաշխումը կենտրոնական գանձապետարանից տեղական գանձապետական բաժիններին և վերահսկվել է կատարումը վերջիններիս կողմից.

➤ ապահովվել է Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ շրջանների համայնքների, բյուջետային հիմնարկությունների հաշիվների ֆինանսավորումը և ծախսերի իրականացումը.

➤ անհրաժեշտության դեպքում նախարարությունների և գերատեսչությունների գրությունների հիման վրա ճշտումներ են իրականացվել նախահաշիվների հոդվածներում: Տարվա ընթացքում մուտքագրվել է 306 գրություն՝ ծախսերի հոդվածային փոփոխություն կատարելու խնդրանքով, որոնցից բավարարվել են 289-ը, իսկ իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից պետական բյուջե վճարած պետական տուրքի վերադարձման (համապատասխան մարմինների կողմից տարբեր գործարքների շիրականացման, ավել գումարի վճարման, գործի վարույթի կարճման և այլ պատճառներով) խնդրանքով գանձապետարան մուտք գործած 99 դիմումները և գրությունները բավարարվել են լրիվությամբ.

➤ ԼՂՀ պետական կառավարման մարմինների 41 գրության հիման վրա նրանց կողմից ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերով հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաբենիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար պետական բյուջեից իրականացվել են «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված վճարումները.

➤ պատրաստվել է ամենօրյա և ամսական տեղեկատվություն պետական բյուջեի եկամուտների, բյուջետային հիմնարկությունների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսավորման մասին.

➤ ապահովվել է բյուջետային հիմնարկությունների գանձապետական հաշիվներով ամենօրյա գործառնությունների ճշշտ և նպատակային իրականացումը.

➤ կազմվել է ամենամսյա տեղեկանք ԼՂՀ պետական բյուջեի կատարողականի մասին ըստ ֆինանսավորման (տնտեսագիտական և գործառնական դասակարգման) և սահմանված ժամկետում ներկայացվել է ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությանը.

➤ ամենօրյա վերահսկողություն է իրականացվել կենտրոնական գանձապետարանի և բոլոր տեղական գանձապետական բաժինների գանձապետական միասնական հաշվով կատարվող գործառնությունների ճշտության և նպատակայնության ուղղությամբ.

➤ իրականացվել է պետական բյուջեի եկամուտների (ըստ հարկատեսակների) և ծախսերի (ըստ խմբերի, ենթախմբերի, ծրագրերի և հողվածների) հաշվառումը.

➤ պետական և համայնքային բյուջեների, բյուջետային հիմնարկների աշխատակազմի պահպանման և ծախսերի առանձին տեսակների նախահաշիվների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ու պետական ոչ առևտրային կազմակերպությունների ծախսերի կատարման եռամյակային և տարեկան հաշվետվությունների ժամանակին և ճիշտ ներկայացման համար տարվել են նախապատրաստական աշխատանքներ՝ ապահովել են հաշվետվությունների ներկայացման անհրաժեշտ ձևերով, տրվել են հաշվետվությունների կազմման հետ կապված պարզաբանումներ.

➤ հսկողություն է սահմանվել 50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող բաժնետիրական ընկերությունների կողմից տնտեսական գործունեության արդյունքում մնացորդային շահույթից շահութաբաժինները պետական բյուջե փոխանցման ուղղությամբ.

➤ նախարարություններից, գերատեսչություններից, բյուջետային այլ հիմնարկություններից և հասարակական կազմակերպություններից ընդունվել են 2009 թվականի պետական բյուջեի, 2010 թվականի առաջին եռամյակի, առաջին կիսամյակի և 9 ամսվա կատարման հաշվետվությունները, որոնց հիման վրա կազմվել են **LՂՀ** պետական և համայնքային բյուջեների ամփոփ հաշվետվությունները.

➤ **LՂՀ** կառավարությանը ներկայացնելու համար պատրաստվել է տեղեկատվություն համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի **LՂՀ** պետական բյուջեի կատարման մասին.

➤ մասնակցություն է ապահովվել **LՂՀ** Ազգային ժողովի մշտական գործող հանձնաժողովներում **LՂՀ** 2009 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության քննարկումներին.

➤ յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածից հետո **LՂՀ** պետական բյուջեի կատարման վերլուծության ամփոփ բնութագիրը ներկայացվել է մանուլում հրապարակման համար.

➤ 2010 թվականի նոյեմբերի 23-ին և դեկտեմբերի 17-ին հիրավիրել են խորհրդակցություններ շրջանների գանձապետական բաժինների պետերի մասնակցությամբ, որտեղ քննարկվել են պետական և համայնքային բյուջեների կատարման, ինչպես նաև մինչև տարեվերջ սպասվելիք՝ համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի արդյունքները:

### **Ֆինանսական վերահսկողության ոլորտում**

Ֆինանսական վերահսկողության շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում լրիվ կամ մասնակի ստուգումներ են իրականացվել հանրապետության տարածքում գործող 108 իրավաբանական անձանց՝ բյուջետային հիմնարկությունների և տնտեսվարող սուբյեկտների մոտ, այդ թվում՝ 15 բյուջետային հիմնարկներում, 47 պետական ոչ առևտրային կազմակերպություններում, 17 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային

կազմակերպություններում, 6 ոչ պետական ձեռնարկություններում, 5 հասարակական կազմակերպություններում, 1 հիմնադրամում, 5 քաղաքային և 12 գյուղական համայնքներում:

Ստուգումների արդյունքներով հայտնաբերվել և լրացուցիչ հաշվարկվել է 218,172.8 հազ. դրամի աճորեն ծախսումներ, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներ և ավելցուկներ: Նշված գումարներից պետական բյուջե լրացուցիչ հաշվարկված գումարները կազմել են 103,061.4 հազ. դրամ, համայնքային բյուջե հաշվարկված գումարները՝ 4,481.3 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին վերականգնման ենթակա գումարները՝ 1,845.0 հազ. դրամ, ֆինանսավորումից պակասեցման ենթակա գումարները՝ 2,401.7 հազ. դրամ, հաշվառումով վերածնակերպման ենթակա գումարները՝ 34,853.0 հազ. դրամ, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդները՝ 57,297.3 հազ. դրամ և ավելցուկը՝ 14,233.1 հազ. դրամ:

2010 թվականին ընդամենը վերականգնվել/վերածնակերպվել է 70,299.8 հազ. դրամի գումար, որից պետական բյուջե՝ 47,389.1 հազ. դրամ, համայնքային բյուջե՝ 3,891.0 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 16,234.8 հազ. դրամ, ֆինանսավորումից պակասեցված գումարը՝ 389.2 հազ. դրամ և հաշվառումով վերածնակերպված գումարը՝ 2,395.7 հազ. դրամ:

Ստուգման արդյունքներով ութ հիմնարկ-ձեռնարկության նյութերը ներկայացվել են ԼՂՀ նստիկանություն և երկու հիմնարկ-ձեռնարկության նյութերը՝ ԼՂՀ գլխավոր դատախազություն:

### **Հաշվապահական հաշվառման և առողիտի կարգավորման ոլորտում.**

Հաշվապահական հաշվառման և առողիտի կարգավորման ու մեթոդաբանության ոլորտում ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից 2010 թվականին կատարված աշխատանքները հիմնականում ուղղված են եղել հաշվապահական հաշվառումը և առողիտորական գործունեությունը կարգավորող իրավական դաշտի կատարելագործմանը, հաշվապահական հաշվառման ոլորտում մեթոդական օժանդակության ցուցաբերմանը, հաշվապահների և առողիտորների ատեստավորմանը և որակավորման քննությունների անցկացմանը:

Հաշվետու տարում մշակվել են հաշվապահական հաշվառումը և առողիտորական գործունեությունը կարգավորող մի շարք իրավական ակտեր և այլ փաստաթղթեր, այդ թվում՝

- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահների ատեստավորման կարգը և հարցաշարը,

- առողիտորների որակավորման քննությունների հարցաթերթիկներում ներառվող թեստերի փոփոխությունները:

Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մակարդակի բարձրացման, հաշվապահների մասնագիտական պատրաստվածության աստիճանի բացահայտման նպատակով և ի կատարումն ԼՂՀ վարչապետի 2010 թվականի փետրվարի 1-ի թիվ 6 արձանագրային հանձնարարականի նախարարության կողմից նախապատրաստվել և անցկացվել է հանրապետության բոլոր պետական կառավարման և տեղական

ինքնակառավարման մարմինների, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահների ատեստավորում (ընդհանում առմամբ՝ 481 հաշվապահ), որին նախորդել են հաշվապահների ատեստավորման կարգի, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների հաշվապահների ատեստավորման հարցաշարի և թեստերի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահների ատեստավորման հարցաշարի և թեստերի մշակումն ու հաստատումը, ինչպես նաև հաստատված հարցաշարերից պատահական ընտրության եղանակով թեստեր արտահանող համակարգչային ծրագրի ստեղծումն ու լրացումը: Ատեստավորման հարցաշարերը հրապարակվել են մամուլում և ատեստավորման կարգի հետ միասին տեղադրվել են ԼՂՀ կառավարության ինտերնետային կայքում:

Անցկացվելիք ատեստավորմանը վերաբերող հարցերի պարզաբանման նպատակով Ստեփանակերտ քաղաքում և ԼՂՀ բոլոր շրջաններում կազմակերպվել են սեմինար-խորհրդակցություններ, որոնց շրջանականներում հաշվապահներին ներկայացվել են ատեստավորման կարգը, հարցաշարում ընդգրկված հարցերը, այն հիմնական նորմատիվ-իրավական ակտերը, որոնց շրջանակներում այդ հարցերը կազմվել են, ինչպես նաև տրվել են հարցաշարի շուրջ հաշվապահներին հուզող հարցերի պարզաբանումներ:

Ատեստավորումը անցկացվել է փուլերով՝ հունիս, հուլիս և սեպտեմբեր ամիսներին: Այնուհետև կազմակերպվել է անցկացված ատեստավորման թեստերի պատասխանների ստուգումներ, արդյունքների ընդհանրացում և ամփոփում՝ ըստ պետական կառավարման մարմինների, համայնքների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների: Ատեստավորման արդյունքները ներկայացվել են ԼՂՀ վարչապետին, ինչպես նաև տեղադրվել ԼՂՀ կառավարության ինտերնետային կայքում:

Ատեստավորման ենթակա 481 հաշվապահներից ատեստավորմանը ներկայացել են 424 հոգի, այսինքն՝ ապահովվել է հաշվապահների 88.1%-ով մասնակցություն: Ատեստավորման արդյունքներով մասնակցած հաշվապահների 66.5 %-ը գնահատվել են դրական: Ատեստավորման ամփոփ տվյալները ներկայացված են աղյուսակում:

Մարմինները	Ատեստավորմանը մասնակցած հաշվապահների թիվը	Առավելագույն միավոր հավաքած հաշվապահների		Ատեստավորված հաշվապահների		Չատեստավորված հաշվապահների	
		թիվը	տողով	թիվը	տողով	թիվը	տողով
Պետական կառավարման մարմիններ	132	36	27.3	122	92.4	10	7.6
Համայնքներ	174	5	2.9	87	50.0	87	50.0
ՊՈԱԿ-ներ	118	2	1.7	73	61.9	45	38.1
<b>Ընդամենը</b>	<b>424</b>	<b>43</b>	<b>10.1</b>	<b>282</b>	<b>66.5</b>	<b>142</b>	<b>33.5</b>

2010 թվականին հաշվապահների որակավորման քննության դիմումներ չեն ներկայացվել:

Տարվա ընթացքում կազմակերպվել է առողջապահության որակավորման մեկ քննություն, որին մասնակցել է մեկ դիմորդ, որը, սակայն, չի ապահովվել բավարար միավորներ:

ԼՂՀ տարածքում 2011 թվականի հունվարի 1-ի դրությամբ ուժի մեջ է թվով 5 հաշվապահի որակավորման վկայական:

Տարվա ընթացքում ԼՂՀ ֆինանսների նախարարությունը հետևողականորեն իրականացրել է հաշվապահական հաշվառման ոլորտում մեթոդական և խորհրդատվական աշխատանքներ, որոնց շրջանակներում հաշվետու տարում պարբերաբար մամուլում հրապարակվել են մեթոդական պարզաբանումներ: Այդ հրապարակումներում ներկայացվել են այն հիմնական մոտեցումները, որոնք պետք է հաշվի առնվեն հաշվապահների կողմից իրենց մասնագիտական գործունեության իրականացման ժամանակ:

Նախարարության կողմից տարվա ընթացքում ԼՂՀ պետական կառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և համայնքների հաշվապահների համար տարբեր ֆորմատներով, այդ թվում նաև՝ տեղերում, անցկացվել են թվով 24 սեմինար-խորհրդակցություններ, որոնց ընթացքում պարզաբանվել են հաշվապահական հաշվառման վարմանը վերաբերող բազմաթիվ հարցեր, մասնավորապես՝ հաշվետվությունների կազմման և ներկայացման, աշխատանքային օրենսդորթյան (այդ թվում՝ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքում կատարված վերջին փոփոխությունները), հիմնական միջոցների և դրամական հոսքերի հետ կապված և այլ հարցեր՝ ելնելով գործող օրենքների, կառավարության որոշումների, ֆինանսների նախարարության հրամաններով սահմանված կարգերի, հաշվապահական ստանդարտների և հաշվային պլանի պահանջներից:

### **Գնումների գործընթացի կարգավորման ոլորտում.**

«Գնումների մասին» ԼՂՀ օրենքի համաձայն ԼՂՀ ֆինանսների նախարարությունը հանդիսանում է գնումների գործընթացի կարգավորումը և համակարգումն իրականացնող լիազոր մարմին: 2010 թվականի ընթացքում գնումների գործընթացի կարգավորման ոլորտում ԼՂՀ ֆինանսների նախարարության հրամաններով սահմանված կարգերի, հաշվապահական ստանդարտների և հաշվային պլանի պահանջներից.

- ստուգել և եզրակացություն է տրվել մոտ 540 գնման ընթացակարգի արձանագրություններին,

- ուսումնասիրվել և պատասխան է տրվել պետության կարիքների համար 2010 թվականին իրականացվող գնումների անվանացանկում փոփոխություն կատարելու վերաբերյալ պետական մարմինների կողմից ներկայացված թվով 58 առաջարկություններին, ինչպես նաև կնքված պայմանագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ 27 գրություններին,

- գնումների ընթացակարգերի կազմակերպման և անցկացման գործընթացի շրջանակներում պետական մարմինների կողմից ներկայացրած հարցադրումների վերաբերյալ տրվել են առաջարկություններ և մեթոդական ցուցումներ,

- պատրաստվել և ամփոփվել են գնումների պաշտոնական տեղեկագրերում հրապարակման

Ենթակա նյութերը, հրապարակվել են գնումների պաշտոնական տեղեկագրի 12 էլեկտրոնային համարներ.

- ստուգվել և ամփոփվել են պետական մարմինների կողմից ներկայացված **LՂՀ** պետական կառավարման մարմինների կարիքների համար 2011 թվականի գնումների անվանացանկերը:

Համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով համապատասխան փոփոխություններ կատարվեցին պետական գնումների գործընթացը կարգավորող օրենսդրության մեջ: Պետության կարիքների համար իրականացվող գնումների գործընթացի կատարելագործման նկատառումներով պայմանավորված, ինչպես նաև «Գնումների մասին» **LՂՀ** օրենքից բխող ենթաօրենսդրական դաշտի հստակեցման նպատակով գնումների գործընթացի կարգավորման բնագավառում մշակվել և **LՂՀ** կառավարության հաստատմանն են ներկայացվել մի շարք որոշումների նախագծեր:


**LՂՀ** ֆինանսների նախարարությունը մասնակցություն է ցուցաբերել **LՂՀ** Նախագահի հոկիլիսի 18-ի թիվ ՆԿ-4-Ս կարգադրությամբ **LՂՀ** պետական գնումների գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ մշակելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի գործունեությանը, ինչպես նաև համագործակցել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ներկայացուցիչների հետ:

Մշակվեց և **LՂՀ** Ազգային Ժողովի ընդունմանը ներկայացվեց «Գնումների մասին» **LՂՀ** նոր օրենքի նախագիծը, որով գնումների հետ կապված հարաբերությունների կարգավորման համար նախատեսվում են առավել արդիական և լիարժեք մեխանիզմներ: Մասնավորապես, օրինագծով առաջարկվում էր գնումների համակարգի ապակենտրոնացում, գնման գործընթացների պարզեցում և բողոքարկման համակարգի հստակեցում: Օրենքն ընդունվել է Ազգային Ժողովի կողմից 2010 թվականի դեկտեմբերի 29-ին:

Ընդհանուր առմամբ, 2010 թվականի ընթացքում մրցակցային հիմունքներով կատարվել են 2,029.3 մլն դրամի գնումներ՝ ապահովելով հատկացված միջոցների տնտեսում 101.3 մլն դրամի կամ հատկացված գումարի 4.8 տոկոսի չափով:

### **Փողերի լվացման և ահարեկտորյան ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում.**

Փողերի լվացման և ահարեկտորյան ֆինանսավորման դեմ պայքարի մասին **LՂՀ** օրենսդրության համաձայն **LՂՀ** ֆինանսների նախարարության կողմից 2010 թվականի ընթացքում ստացվել, ուսումնասիրվել և տվյալների շտեմարան է մուտքագրվել թվով 108 հաշվետվություն, որոնք բոլորն ել վերաբերվում էին պարտադիր տեղեկացման ենթակա գործարքներին: Ներկայացված հաշվետությունների բաշխումն ըստ հաշվետու անձանց տեսակների ներկայացված է գծապատկերում:



**Գծապատկեր.** Ներկայացված հաշվետությունների քանակը ըստ հաշվետու անձանց տեսակների (հատ)

Ըստունակվել է սերտ համագործակցություն ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի հետ, որի շրջանակներում ԼՂՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչը մասնակցել է ք. Ծաղկաձորում կայացած՝ ՀՀ առևտրային բանկերի ներքին դիտարկումների մարմինների ներկայացուցիչների հանդիպմանը, որտեղ ներկայացրել է ԼՂՀ փողերի լվացման և ահարեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգը և կատարված աշխատանքները:

### **Լիցենզավորման, վիճակախաղերի և քանկարժեր մետաղների ոլորտում.**

Լիցենզավորման մասին ԼՂՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվում է «Առլիտորական ծառայությունների իրականացում», «Վիճակախաղերի կազմակերպում», «Շահումով խաղերի կազմակերպում», «Խաղատների կազմակերպում», «Ժանկարժեր մետաղներից պատրաստված իրերի հարգործում և հարգադրոշմում» և «Ժանկարժեր մետաղների գտարկում, բանկային ուկու և ստանդարտացված ձուլակտորների արտադրություն» գործունեության տեսակների լիցենզավորում: 2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ ուժի մեջ էին վիճակախաղերի կազմակերպման 3 և քանկարժեր մետաղներից պատրաստված իրերի հարգործման և հարգադրոշման 2 լիցենզիաներ:

Նշված աշխատանքների շրջանակներում 2010 թվականի ընթացքում.

- հավաքագրվել, ուսումնասիրվել և վերլուծվել են լիցենզավորված անձանց կողմից ներկայացված հաշվետվությունները, միջոցներ են ձեռնարկվել պետական տուրքը ժամանակին գանձելու համար.

- ամսական և եռամսյակային տեղեկություններ են տրամադրվել ԼՂՀ արդարադատության նախարարությանը, ԼՂՀ կառավարությանն առլիքեր հարկային պետական ծառայությանը և ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությանը՝ տրամադրված, կասեցված, դադարեցված լիցենզիաների և գանձված պետական տուրքի վերաբերյալ:

Վիճակախաղերի բնագավառում իրականացվել են տոտալիզատոր կազմակերպիչների 13

հասցեներում գործող կետերի ստուգումներ, որի արդյունքում արձանագրված խախտումների համար 2 լիցենզավորված սուբյեկտի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառվել է նախազգուշացում: Լիցենզիայի որոշ պահանջներ խախտելու համար լիցենզավորված սուբյեկտների նկատմամբ կիրառվել է տուգանք՝ յուրաքանչյուրի համար 50 հազ. դրամի չափով:

Մշակվել և ԼՂՀ Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացվել «Վիճակախաղների մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Հաստատագրված վճարների մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ օրենքների նախագծերի փաթեթը, որի համաձայն 2010 թվականի հուլիսի 1-ից ԼՂՀ տարածքում արգելվել է տոտալիզատորի կազմակերպման գործունեությունը: ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպվել է գործող տոտալիզատոր կազմակերպողների գործունեությունը դադարեցնելու և լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու գործընթացը:

Հաշվետու տարում գանձվել է 1,600.0 հազ. դրամի չափով պետական տուրք և 16.5 հազ. դրամի չափով տույժ: Կազմակերպվել են ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից բարդ ընթացակարգով լիցենզավորման հանձնաժողովի 3 նիստեր, որոնք նվիրված էին կատարված ստուգումների արդյունքների ամփոփմանը, լիցենզավորված անձանց դիմումների ուսումնասիրմանը և լիցենզիաների գործողության դադարեցման հարցերի քննարկմանը:

Մշակվել և ԼՂՀ Ազգային ժողովի ընդունմանն է ներկայացվել «Թանկարժեք մետաղների մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ օրենքների նախագծերի փաթեթը, որի համաձայն:

- ԼՂՀ-ում կիրառության մեջ է դրվում Հայաստանի Հանրապետությունում գործող թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի տարրերանիշը, ինչը թույլ կտա վաճառողներին խուսափել լրացուցիչ ծախսերից՝ կապված կրկնակի հարգորոշման և հարգադրոշման հետ,

- հստակեցվում են պահանջները, որոնք ուղղված են թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի սպառողների շահերի պաշտպանությանը և սահմանված պահանջներին չհամապատասխանող իրերի՝ ներքին շուկա ներքափանցման սահմանափակմանը,

- ԼՂՀ տարածքում «Թանկարժեք մետաղների գտարկում, թանկային ոսկու և ստանդարտացված ձոլակտորների արտադրություն», ինչպես նաև «Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշում և հարգադրոշմում» գործունեության տեսակները լիցենզավորվելու են Հայաստանի Հանրապետության լիազորած պետական մարմնի կողմից, ինչը հնարավորություն կընձեռի ԼՂՀ թանկարժեք մետաղներից պատրաստված իրեր արտադրողներին ներկայացնել իրենց արտադրանքը Հայաստանի Հանրապետությունում գործող տարրերանիշով, որը կնպաստի արտերկրում նրանց ճանաչմանը:

Ծահագրգիռ քննարկումներից հետո նշված օրենքները ընդունվել են Ազգային ժողովի կողմից:

### **Ապահովագրության ոլորտում**

2010 թվականի ընթացքում ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից աշխատանքներ են իրականացվել հանրապետությունում ապահովագրական շուկայի զարգացման ուղղությամբ:

Նախարարության աջակցությամբ 2010 թվականի հունիսի 12-ին ք. Ստեփանակերտում կայացել է Հայաստանի ապահովագրողների արտագնա համաժողովը, որը կազմակերպվել է Հայաստանի ապահովագրական շուկայի մասնակիցների ասոցիացիայի կողմից: Համաժողովի ընթացքում քննարկվել են ԼՂՀ ապահովագրական շուկայի զարգացման նախադրյալներն ու հեռանկարները:

2010 թվականին, համագործակցելով ՀՀ կենտրոնական բանկի հետ, ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել և ԼՂՀ Ազգային ժողովի ընդունմանն է ներկայացվել օրենքների նախագծերի փաթեթ, որի համաձայն 2011 թվականի հունվարի 1-ից ԼՂՀ տարածքում ներդրվում է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության համակարգը: Նախագիծը ընդունվել է Ազգային ժողովի կողմից, և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում դրվել է գործողության մեջ:

Հաշվի առնելով ապահովագրության նշանակած տեսակի՝ որպես պարտադիր ապահովագրության առաջին տեսակ, ներդնելու հետ կապված հնարավոր դժվարությունները, ՀՀ կենտրոնական բանկի, ԼՂՀ ֆինանսների նախարարության, ԼՂՀ ոստիկանության և ՀՀ ապահովագրական ընկերությունների մասնակցությամբ Շուշի քաղաքում անցկացվեց ընդլայնված խորհրդակցություն, որին քննարկվել և պրակտիկ լուծում են ստացել ԱՊԴԱ համակարգի գործարկման հետ կապված որոշակի խնդիրներ:

### **Փաստաթրաշրջանառության, իրավաբանական ծառայության և կատրային ոլորտում**

2010 թվականի ընթացքում ԼՂՀ ֆինանսների նախարարությունը ստացել է 3142 փաստաթուղթ, որից 38-ը՝ քաղաքացիների դիմումներ: Բոլոր ստացված փաստաթորերը քննարկվել, ընթացքավորվել են և անհրաժեշտության դեպքում տրվել են պատասխաններ:

Նախարարությունը միշտ ուշադրության կենտրոնում է պահել բնակչության հետ հետադարձ կապի ապահովումը, նախարարության աշխատողների կողմից մշտապես իրականացվել են ընդունելություններ ու հանդիպումներ (տարվա ընթացքում՝ ավելի քան հազար ընդունելություն): Իրավաբանական անձանց ու քաղաքացիների կողմից բարձրացված խնդիրները լսվել և պարզաբանվել են, ծեռնարկվել են միջոցներ դրանց լուծման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից ընդհանուր առմամբ մշակվել և ներկայացվել են 162 իրավական ակտերի նախագծեր, այդ թվում.

ԼՂՀ օրենքներ	- 14
ԼՂՀ Նախագահի հրամանագրեր	- 1
ԼՂՀ կառավարության որոշումներ	- 97
ԼՂՀ վարչապետի որոշումներ	- 42
ԼՂՀ ֆինանսների նախարարի հրամաններ	- 8

Ուսումնասիրվել են նախարարություններից ու գերատեսչություններից ներկայացված ԼՂՀ օրենքների, ԼՂՀ կառավարության որոշումների, այլ իրավական ակտերի և ծրագրերի նախագծերը, գնահատվել է դրանց արդյունավետությունը և համապատասխանությունը ԼՂՀ օրենսդրության պահանջներին, տրվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:

Նախարարության կողմից կատարված աշխատանքների թափանցիկությունը և հրապարակայնությունն ապահովելու նպատակով պարբերաբար հաղորդագրություններ են հրապարակվել մամուլում և ԼՂՀ կառավարության պաշտոնական ինտերնետային կայքում:

Կադրային ոլորտում նախարարության կողմից կատարված աշխատանքներն ուղղված են եղել քաղաքացիական ծառայության մասին ԼՂՀ օրենսդրության պահանջների ապահովմանը, աշխատակազմի մասնագետների գիտելիքների և փորձի բարձրացմանը: Նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոններ գրադեցնելու համար տարվա ընթացքում կազմակերպվել է 3 մրցույթ: Քաղաքացիական ծառայության մասին ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացվել են նաև անձնակազմի 16 ատեստավորումներ: Փորձի փոխանակման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ կազմակերպվել են մասնագետների փոխադարձ այցելություններ: